# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«04» փետրվարի 2021թ. N 4/19

1.Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի նկարագրությունը, վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հասարակական կարգի պահպանության ծառայության աշխատակից Ս. Մխիթարյանի կողմից 03.04.2020 թվականին հայտնաբերվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (հետայսուս՝ Օրենսգիրք) 154-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտում, մասնավորապես՝ քաղաքացի Էդգար Սամվելի Վասիլյանի կողմից Երևան քաղաքի Գոգոլի փողոցի հ. 86 շենքին կից ինքնակամ իրականացվել է գոյություն ունեցող շինության արտաքին պատի վերակառուցման, մասնավորապես՝ դռան բացվածի իրականացման և դռան տեղադրման շինարարական աշխատանքներ, որի վերաբերյալ 03.04.2020 թվականին կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 033398 արձանագրությունը արձանագրությունը (այսուհետ՝ արձանագրություն):

Որպես իրավախախտման փաստը հաստատող ապացույց, իրավախախտման հայտնաբերման պահին լուսանկարվել է իրավախախտման վայրը:

Հայտնաբերված իրավախախտման փաստով Երևանի քաղաքապետարանի նախաձեռնությամբ հարուցվել է վարչական վարույթ:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ աշխարհում և Հայաստանի Հանրապետությունում նոր կորոնավիրուսային հիվանդության տարածման կապակցությամբ ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 16-ի «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» թիվ 298-Ն որոշմամբ հայտարարվել է արտակարգ դրություն՝ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում՝ 2020 թվականի մարտի 16-ից՝ ժամը 18:30-ից սկսած, մինչև 2020 թվականի ապրիլի 14-ը՝ ժամը 17:00-ն ներառյալ ժամկետով, որին հաջորդել է Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում հայտարարված արտակարգ դրության գործողության ժամկետը երկարաձգելու մասին ՀՀ կառավարության 2020 թվականի ապրիլի 13-ի թիվ 543-Ն որոշումը, համաձայն որի արտակարգ դրության գործողության ժամկետը երկարաձգվել է մինչև մայիսի 14-ը՝ ժամը 17.00-ն ներառյալ, հետևաբար հարուցված վարչական վարույթը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի (հետայսուս՝ Օրենք) 49-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով 15.04.2020 թվականի հ. Վ-15/242 որոշմամբ կասեցվել է մինչև 2020 թվականի մայիսի 14-ը՝ ներառյալ: Նշված ժամկետային ընդունված որոշումը ներկայումս հանդիսանում է ուժը կորցրած իրավական ակտ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի ապրիլի 14-ի թիվ 543-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետությունում հայտարարված արտակարգ դրության ժամկետը Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մայիսի 14-ի թիվ 729-Ն որոշմամբ երկարաձգվել է մինչև 2020 թվականի հունիսի 13-ը՝ ժամը 17:00-ն ներառյալ ժամկետով, սակայն նկատի ունենալով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության պարետի կողմից ազատ տեղաշարժի խիստ սահմանափակումները վերացվել են, հետևաբար վերացել է սույն վարչական վարույթի կասեցման համար հիմք դարձած հանգամանքները:

Վարչական իրավախախտման գործով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործի փաստական հանգամանքների քննարկմանը քաղաքացի Էդգար Սամվելի Վասիլյանի մասնակցությունը ապահովելու նպատակով Երևանի քաղաքապետարանի կողմից միջոցներ են ձեռնարկվել քաղաքացի Էդգար Սամվելի Վասիլյանին Երևանի քաղաքապետարանում կայանալիք նիստերի վերաբերյալ ծանուցելու համար, սակայն ծանուցագրերը չեն հանձնվել՝ վերջինիս չհայտնաբերելու պատճառով հետ են վերադարձվել կամ մինչ օրս չեն վերադարձվել, իսկ քաղաքացին չի ներկայացել Երևանի քաղաքապետարան:

Հաշվի առնելով, որ Օրենսգրքի դրույթներով չեն կանոնակարգվում վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթների կասեցման դեպքերը, հիմքերն ու կարգը, և այդպիսի կարգավորումները սահմանվում են Օրենքով, ուստի ղեկավարվելով Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով՝ 03.04.2020 թվականին կազմված հ. 033398 արձանագրության հիման վրա հարուցված վարչական վարույթը 19.06.2020 թվականի հ. Վ-24/68 որոշմամբ կասեցվել է:

Վարչական իրավախախտման գործով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործի փաստական հանգամանքների քննարկմանը քաղաքացի Էդգար Սամվելի Վասիլյանի մասնակցությունը ապահովելու նպատակով Երևանի քաղաքապետարանի կողմից կրկին միջոցներ են ձեռնարկվել քաղաքացի Էդգար Սամվելի Վասիլյանին Երևանի քաղաքապետարանում կայանալիք նիստերի վերաբերյալ ծանուցելու համար, սակայն ծանուցագրերը չեն հանձնվել՝ քաղաքացուն չհայտնաբերելու պատճառով և հետ են վերադարձվել:

Վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 12.08.2020 թվականի հ. Վ-32/49, 07.10.2020 թվականի հ. Վ-40/56, 02.12.2020 թվականի հ. Վ-48/43, 27.01.2021 թվականի հ. Վ-3/30 որոշումներով քաղաքացի Էդգար Սամվելի Վասիլյանի նկատմամբ կասեցված վարչական վարույթը վերսկսվել է:

Վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 12.08.2020 թվականի հ. Վ-32/55, 07.10.2020 թվականի հ. Վ-40/61, 02.12.2020 թվականի հ. Վ-48/49, 27.01.2021 թվականի հ. Վ-3/39 որոշումներով կասեցվել է 03.04.2020 թվականին քաղաքացի Էդգար Սամվելի Վասիլյանի նկատմամբ կազմված հ. 033398 արձանագրության հիման վրա հարուցված վարչական վարույթը:

Վարչական իրավախախտման գործով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործի փաստական հանգամանքների քննարկմանը քաղաքացի Էդգար Սամվելի Վասիլյանի մասնակցությունը ապահովելու նպատակով Երևանի քաղաքապետարանի կողմից կրկին միջոցներ են ձեռնարկվել քաղաքացի Էդգար Սամվելի Վասիլյանին Երևանի քաղաքապետարանում 04.02.2021 թվականին կայանալիք գործի քննությանը ծանուցելու համար:

Քաղաքացի Էդգար Սամվելի Վասիլյանը ծանուցված լինելով 04.02.2021 թվականին կայանալիք գործի քննության տեղի և ժամանակի մասին չներկայացավ, ուստի Օրենսգրքի 267-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն գործը քննվեց վերջինիս բացակայությամբ:

Գործի քննության ընթացքում՝ որպես մեկ համակցություն, հետազոտվեցին արձանագրությունը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հասարակական կարգի պահպանության ծառայության պետի 23.10.2020 թվականի հ. 51/44-35472հ, 13.08.2020 թվականի հ. 51/44-35472, 16.06.2020 թվականի հ. 51/44-35472 գրությունները, Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավարի 02.09.2020 թվականի հ. 1852254 31/01-44-35472, 02.07.2020 թվականի հ. 1807267 31/01-1/537 գրությունները, ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Քանաքեռ-Զեյթունի բաժնի պետի 14.12.2020 թվականի հ. 39/17/55343-20 գրությունը և իրավախախտման լուսանկարը:

Գործի փաստական հանգամանքների և դրանում առկա բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման արդյունքում հիմնավորվեց, որ քաղաքացի Էդգար Սամվելի Վասիլյանի կողմից Երևան քաղաքի Գոգոլի փողոցի հ. 86 շենքին կից ինքնակամ իրականացվել է գոյություն ունեցող շինության արտաքին պատում բացվածքի բացման և դարպասի տեղադրմամբ շինարարական աշխատանքներ: Իրականացված շինարարական աշխատանքներն ընդգրկված չեն ՀՀ կառավարության 19.03.2015թ. թիվ 596 որոշմամբ սահմանված կարգի 4-րդ հավելվածի 1-ին ցանկի 2-րդ և 3-րդ բաժիններում նկարագրված՝ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքներում:

Քաղաքացի Էդգար Սամվելի Վասիլյանի կողմից թույլ է տրվել Օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտում:

2. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումները.

Օրենսգրքի 9-րդ հոդվածի համաձայն՝ Վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, սոցիալիստական սեփականության, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

Սույն օրենսգրքով նախատեսված իրավախախտումների համար վարչական պատասխանատվություն առաջանում է, եթե այդ խախտումները իրենց բնույթով քրեական պատասխանատվություն չեն առաջացնում գործող օրենսդրությանը համապատասխան:

Օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերության համաձայն՝ սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձանց կողմից այդ հողամասի վրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելը, ինչպես նաև բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից ինքնակամ կառույցներ կատարելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկու հարյուրապատիկի չափով:

Օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ սույն օրենքը սահմանում է վարչարարության հիմունքները, կարգավորում է վարչական ակտեր ընդունելու, վարչական ակտերը, վարչական մարմինների գործողությունները և անգործությունը բողոքարկելու, վարչական ակտի կատարման, վարչական ծախսերի, ինչպես նաև վարչարարությամբ հասցված վնասի հատուցման հետ կապված՝ վարչական մարմինների և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց (այսուհետ՝ անձինք) միջև ծագած հարաբերությունները:

Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե վարույթին չի ներկայացել վարչական ակտի հասցեատերը, իսկ օրենքը բացառում է առանց նրա ներկայության համապատասխան վարչական ակտ ընդունելը:

Օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերության համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասի «բ» և «գ» կետերով, ինչպես նաև 2-րդ մասով նախատեսված դեպքերում վարչական վարույթը վերսկսվում է դրա կասեցման հիմք դարձած հանգամանքները վերանալուց հետո, բայց ոչ ուշ, քան կասեցման մասին որոշում ընդունելու օրվանից հետո 60 օրը լրանալը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենսգրքի 23-րդ հոդվածի 2-րդ կետով, 154-րդ հոդվածի 1-ին մասով, 219.1-րդ, 252-րդ, 281-րդ և 282-րդ հոդվածներով, Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, 3-րդ մասի 2-րդ պարբերությունով, Երևանի քաղաքապետի 14.02.2020 թվականի թիվ 460-Ա որոշմամբ՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Քաղաքացի Էդգար Սամվելի Վասիլյանի նկատմամբ 27.01.2021 թվականի հ. Վ-3/39 որոշմամբ կասեցված վարչական վարույթը վերսկսել:

2. Քաղաքացի Էդգար Սամվելի Վասիլյանին Օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով ենթարկել վարչական պատասխանատվության՝ նշանակելով վարչական տույժ 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի չափով:

3. Նախազգուշացնել քաղաքացի Էդգար Սամվելի Վասիլյանին, որ շինարարական աշխատանքներն ինքնակամ շարունակվելու դեպքում այն կառաջացնի վարչական տուգանք 2.500.000 ՀՀ դրամ գումարի չափով:

4. Օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն տուգանքը պետք է վճարվի սույն որոշումը իրավախախտում կատարած անձի կողմից ստանալուց ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում՝ կենտրոնական գանձապետարանի N 900015211239 հաշվեհամարին:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երեսուն օրվա ընթացքում, իսկ դատական կարգով՝ երկամսյա ժամկետում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՎԱՐՉԱԿԱՆ
ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ ԱՐԱՄ ԱԲՈՎՅԱՆ